



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

15 մայիսի 2019թ. թիվ 643

**Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ՄԵԾ ԱՅՐՈՒՄ ԵՎ ՃՈՃԿԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանին և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Անի Ղազարյանին ս/թ մայիսի 16-ին մեկ օրով գործուղել Մեծ Այրում և Ճոճկան համայնքներ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների ուսումնասիրության համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

5/15/2019

X

ՎԱԼԵՐԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2019թ. մայիսի 15
ք.Վանաձոր